ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

18 օգոստոսի հինգշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

122
(2602)

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 71

Ավելի քան 2 ամիս առաջ տիեզերք իբրեւ թե ուղարկված արբանյակի մասին «Ժողովուրդ» օրաթերթը մեկ անգամ չէ, որ գրել է: Այս անգամ, սակայն, ուզում ենք հիշեցնել, թե ինչպես էր վարչապետ Փաշինյանը 44-օրյա պատերազմում պարտությունը կապում արբանյակի չգոյության հետ, իսկ նրա կաբինետի՝ այն ժամանակ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Հակոբ Արշակյանն ամեն գնով արդարացնում էր արբանյակ չունենալը կամ «ընդամենը մեկ արբանյակ ունենալու ոչ արդյունավետությունը»: Այդ մասին, ի դեպ, Հակոբ Արշակյանը հայտարարել էր 44-օրյա պատերազմից ուղիղ մեկ ամիս առաջ՝ օգոստոսի 26-ին, թեեւ այժմ ԱԺ փոխնախագահի պաշտոնը զբաղեցնող Հակոբ Արշակյանը մինչեւ այս պահն այդպես էլ չի բացատրել, թե «ընդամենը մեկ արբանյակ ունենալն» ինչպես դարձավ արդյունավետ: Փաստենք, որ «ընդամենը մեկ արբանյակը», որ, ըստ կառավարության անդամների ու անձամբ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հավաստիացումների, մոտ 2.5 ամիս սավառնում է երկնակամարում, որեւէ լուսանկար, կոորդինատ կամ այլ փաստ չի տրամադրել: Հարց կարող է առաջանալ՝ ՀՀ-ն տիեզերքում արբանյակ ունի՞ իսկապես, թե՞ ոչ: Հանուն արդարության՝ փաստենք (ինչպես վերը նշել ենք), որ տիեզերքում սեփական արբանյակ ունենալու կարեւորության մասին նաեւ Նիկոլ Փաշինյանն էր բարձրաձայնում՝ համեմատություն անցկացնելով Ադրբեջանի հետ: «2017-ին Ադրբեջանը Երկրի ուղեծրում երեք արբանյակ ուներ, որից մեկը՝ հետախուզական: Այո, Ադրբեջանը հետախուզական արբանյակ էր գնում, իսկ ՀՀ իշխանությունները հունական կղիներում, եվրոպաներում ու այնտեղ, որտեղ հնարավոր էր, հողամասեր էին գնում»,- պատերազմից հետո՝ 2021-ի ապրիլի 14-ին, նեղսրտում էր Փաշինյանը: Ի՞նչ է ստացվում. տիեզերքում արբանյակ ունենալու մասին իրարամերժ, մեկմեկու հակասող հայտարարություններով Փաշինյանն ու յուր թիմակիցները հերթական անգամ ստել են:

Կառավարությունն առաջարկում է փոփոխություն կատարել «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում եւ Հակակոռուպցիոն կոմիտեում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող աշխատակիցների համար հավելավճար սահմանել: Ըստ հիմնավորման՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող աշխատակիցների համար օրենքն արդեն իսկ նախատեսում է հավելավճար ստանալու հնարավորություն, սակայն չի նախատեսվել օպերատիվ-հետախուզական գործունեության ստաժը հաշվարկելու եւ դրա հիման վրա հավելավճար տրամադրելու գործիքակազմ: Եվ, այսպիսով, առաջարկվում է հնարավորություն տալ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց ստանալու հավելավճար՝ ստաժի հաշվարկմամբ: Նախագծերով առաջարկվում է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց Հակակոռուպցիոն կոմիտեում՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանումներում աշխատած յուրաքանչյուր տարվա համար տրամադրել հավելավճար, ինչպես նաեւ վերականգնել ՀՔԾ նախկին աշխատակիցների՝ դատախազությունում կամ քննչական կոմիտեում ծառայությունը շարունակելու պարագայում ՀՔԾ-ում աշխատած տարիների ստաժի նկատմամբ հավելավճար հաշվարկելու իրավունքը, կարգավորել Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի վարձատրության հետ կապված հարաբերությունները:



«Ժողովուրդ» օրաթերթի ձեռքում է հայտնվել բացառիկ փաստաթուղթ: Պարզվում է՝ «Սուրմալու» առեւտրի կենտրոնում անվտանգության կանոնները դեռ նախորդ տարվանից չեն պահպանվել, եւ շատ մարդիկ, իրենց անվտանգությունից դրդված, ստիպված են եղել լքել առեւտրի կենտրոնը: Եւ այսպես, մեր ձեռքի տակ հայտնված փաստաթղթի համաձայն՝ 2021 թվականի ապրիլի 6-ին «Սուրմալու» առեւտրի կենտրոնում բռնկված հրդեհի գործով առեւտրի կենտրոնի տուժած տնտեսվարողներից մեկի փաստաբան Տիգրան Մուրադյանը միջնորդություն է ներկայացրել Երեւան քաղաքի դատախազ Սեւակ Հովհաննիսյանին եւ մի շարք կոպիտ խախտումների մասին արձանագրել՝ հորդորելով միջոցներ ձեռնարկել, որպեսզի դադարեցվի «Սուրմալու» առեւտրի կենտրոնի գործունեությունը: Երեւան քաղաքի դատախազ Սեւակ Հովհաննիսյանը որեւէ պատասխան չի տվել միջնորդությանը: Այս գործով մեկ տարի շարունակ կոնկրետ անգործության է մատնված եղել Գլխավոր դատախազությունը՝ ի դեմս Երեւան քաղաքի դատախազ Սեւակ Հովհաննիսյանի: Շուրջ 1 տարի անգործության է մատնված եղել ՀՀ քննչական կոմիտեն, քանի որ 2021 թվականի ապրիլի 6-ին «Սուրմալու» առեւտրի կենտրոնում բռնկված հրդեհի գործով դեռ քննությունը շարունակվում է: Կասկածելի դանդաղկոտություն է ցուցաբերել նաեւ Փորձաքննությունների ՊՈԱԿ-ը, քանի որ մեկ տարի շարունակ չի տվել փորձագիտական եզրակացությունը. այն մեկ ամիս առաջ է միայն ստացվել: Մասնագիտական եզրակացությամբ հաստատվել է, որ առեւտրի կենտրոնի ղեկավարությունը չի պահպանել անվտանգության կանոնները: Եթե մեկ տարի առաջ Գլխավոր դատախազությունը կասկածելի անուշադրության չմատներ եւ պատշաճ ուսումնասիրեր փաստաբանի միջնորդությունը, որտեղ բազմաթիվ խախտումների մասին էր բարձրաձայնել, եւ դեռ ավելին՝ քննիչն էլ փափուկ բարձ չդներ փաստաբանի գլխի տակ, թե հարցը կքննարկեն փորձաքննության արդյունքները ստանալուց հետո, այսօր չէինք ունենան 16 զոհ: Կից ներկայացնում ենք փաստաթուղթը՝ հիմնավորումներով, թե ինչու էր անհրաժեշտ փակել «Սուրմալուն», ինչը Նիկոլ Փաշինյանի անկաշառ պետական օղակները չեն արել:



Հայաստանում քովիդ թեստերը դարձյալ պահանջված են: Օգոստոսի 8-14-ի դրությամբ գրանցվել է 1713 նոր դեպք, կատարվել է 6829 թեստավորում: Ունենք 1704 առողջացած, գրանցվել է 6 մահվան դեպք: Տեղեկացնենք, որ, երբ մեր հանրապետությունում կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակը կայունացավ, դեպքերի քանակը նվազեց, լաբորատորիաները, ԲԿ-ները թեստերի գները նվազեցրին: Հիմա դրանք դարձյալ բարձր են: «Ժողովուրդ» օրաթերթը զանգահարեց մի քանի բժշկական կենտրոններ եւ հետաքրքրվեց, թե ինչ արժե քովիդ թեստն այժմ: Նշենք, որ ՊՇՌ թեստերը շարունակում են բարձր գնով առաջարկվել քաղաքացուն: Պարզվեց, որ դրանց գները սկսում են 6000 դրամից եւ հասնում 9000 դրամի: Օրինակ՝ բժշկական կենտրոններից մեկն առաջակում է քովիդ թեստ 9000 դրամով, մյուսը՝ 6000 դրամով: Մեկ այլ բժշկական կենտրոնից «Ժողովուրդ» օրաթերթին փոխանցեցին, որ քովիդ թեստ հանձնելու համար պետք վճարել 8000 դրամ, իսկ եթե Ռուսաստան մեկնելու համար է հարկավոր թեստի հանձնումը, ապա պետք է վճարել 9000 դրամ, այսինքն՝ 1000 դրամով ավելի: Ըստ այդ բժշկական կենտոնի՝ ՌԴ մեկնելու համար հատուկ ծրագիր է անհաժեշտ, ինչը ծախսատար է: Ի դեպ, տեղեկացնենք, որ քովիդ թեստերի գներն առաջիկայում էլ ավելի են բարձրանալու, եթե, իհարկե, պատկան մարմինները, մասնավորապես՝ Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը չվերահսկի ԲԿ-ներին ու լաբորատորիաներին:

ՃՆՇԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

ԹԵ՛ ՔԱՂՀԱԼԱԾՅԱԼՆԵՐ, ԹԵ՛ ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐ ԿԱՆ

Չալաբյանը, որ մեղադրվում է 2022թ.-ին «Դիմադրություն» շարժման ժամանակ երկու կամ ավելի անձանց, տվյալ դեպքում՝ ուսանողներին հավաքներին մասնակցելու նպատակով նյութական շահագրգռելու համար, շարունակում է անազատության մեջ մնալ: Ըստ նրա՝ պատշգամբային թիմի՝ մեղադրանքի հիմքում դրված է ընդամենը մեկ մոնտաժված եւ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իմաստով անթույլատրելի համարվող ձայնագրություն, որում Ավետիք Չալաբյանը հավաքներին մասնակցելու նպատակով նյութական շահագրգռվածություն առաջարկելու վերաբերյալ որեւէ պնդում չի անում:

Չալաբյանի գործի մասով «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Չալաբյանի պաշտպանական թիմի անդամ, իրավաբան Վարազդատ Հարությունյանի հետ:

-Մոտ մեկ ամիս առաջ քաղաքական, հասարակական գործիչ Ավետիք Չալաբյանի խափանման միջոցը փոխվել էր, ու կիրառվել էր գրավով ազատ արձակելու որոշում: Կարճ ժամանակ անց, սակայն, Չալաբյանը նորից էր կալանավորվել: Կխնդրեի նախ ներկայացնել, թե ի՞նչ փուլում է այժմ գործն, ու Ձեր գնահատականն ամբողջ այդ գործընթացին:

-Գործը դատաքննության փուլում է, հետազոտվում են ապացույցները: Ինչպեսեւ ենթադրում էինք, դատավոր Մնացական Մարտիրոսյանի գերխնդիրն է լինելու ապահովել Չալաբյանի նկատմամբ կալանքը: Ճիշտ է՝ Չալաբյանի կալանքի ժամկետով պայմանավորված՝ խափանման միջոցի փոփոխություն եղավ, ու Չալաբյանը հայտնվեց ազատության մեջ (մոտ 7 օր): Այդ 7 օրվա ընթացքում Ավետիք Չալաբյանը հակաօրինական վարքագիծ չդրսեւորեց, ավելին՝ անգամ դատախազությունը միջնորդեց գրավ կիրառել, բայց, այնուամենայնիվ, Մնացական Մարտիրոսյանը քաղաքական պատվերի շրջանակներում այլ բան չէր կարող անել, քան ոչ մեծ ծանրության մեջ մեղադրվող անձին՝ քաղաքական հետապնդման սյուբեկտին կրկին բանտ ուղարկելը:

-Վերջերս՝ քննարկումներից մեկի ժամանակ, ասել եք, որ դատավոր Մ. Մարտիրոսյանը հստակ գնում է դեպի մեղադրական դատավճիռ կայացնելը: Փոքր-ինչ մանրամասնեք, խնդրում եմ:

-Այո, ես այդպիսի գնահատական եմ տվել, որովհետեւ, այս գործի սկզբից սկսած, մեր կողմից տրված բոլոր գնահատականներն իրականացել են: Գործը տեղավորվում է քաղաքական հետապնդման շրջանակների մեջ, եւ ըստ այդ ալգորիթմի՝ քաղաքական հետապնդման գործընթացն իրենք գրեթե անխափան են առաջ տանում: Մենք «գուշակել էինք», որ գործը մակագրվելու է Մնացական Մարտիրոսյանին: Գուշակել էինք նաեւ, որ նա կրկին կալանավորելու է Չալաբյանին, եւ այդ նույն տրամաբանությամբ ենթադրում ենք, որ նրա սեղանին գրված եւ դրված է մեղադրական դատավճիռը:

-Չալաբյանի ընկերները, համախոհները, այդ թվում՝ Դուք, վստահ եք, որ նրա անձի շուրջը կատարվողը ոչ այլ ինչ է, քան քաղաքական հետապնդում, մինչդեռ ոչ միայն ՀՀ իշխանությունները, այլ նաեւ միջազգային կառույցները Չալաբյանին քաղհետապնդման զոհ չեն համարում:

-Տարօրինակ կլիներ, որ Հայաստանի Հանրապետության իշխանություններն Ավետիք Չալաբյանին քաղբանտարկյալ կամ քաղաքական հետապնդման զոհ համարեին: Ինչ վերաբերում է միջազգային կազմակերպություններին, ապա ես մի փոքր զարմացած եմ, քանի որ նրանք դեռեւս դիրքորոշում չեն հայտնել՝ ո՛չ ասել են քաղբանտարկյալ է, ո՛չ էլ հակառակը: Մենք միջազգային կազմակերպությունների հետ աշխատում ենք, շատերի հետ ակտիվ կապի մեջ ենք եւ անընդհատ զինում ենք իրենց տեղեկատվությամբ, ստանում ենք իրենց պատասխանները, եւ, իհարկե, այդ ամենը կարճ ժամկետում չի լինում: Իմ կարծիքով՝ կլինեն նաեւ տարբեր կազմակերպությունների զեկույցներն ու դիրքորոշումները:

-Որպես իրավաբան՝ այսօր, բացի Չալաբյանից, այլ քաղհալածյալների կամ: Իշխանության հատուկ գործելաոճ տեսնո՞ւմ եք այդ մասով:

-Իհարկե, կան քաղհալածյալներ եւ քաղբանտարկյալներ. Գերասիմ Վարդանյանը, Տարոն Մանուկյանը... Սակայն քաղհալածյալները միայն այն մարդիկ չեն, որոնք բանտարկված են, այլ նրանք, որոնց դեմ տարատեսակ վարույթներ են հարուցված՝ դա կլինի քրեական վարույթ, հարկային մարմնի ստուգում կամ, ասենք, գույքի բռնագանձման վարույթ: Խնդիրը շատ պարզ է. իշխանությունները եղածի իրավական գործիքակազմը կիրառում են ոչ թե իրավաչափության, այլ քաղաքական հակառակորդների ճնշելու նպատակով: Այդ տրամաբանությունն այս տարիների ընթացքում շատ ակնհայտ է դարձել:

Զրույցը՝ ՍԵՎՍԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԻ

ՆՅՈՒԹԵՐ

ԿԵՂԾ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐ՝ ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻՆ

ՀՀ-ում ՌԴ դեսպանատունը նոտա է հղել ՀՀ ԱԳՆ-ին օգոստոսի 14-ին «Սուրմալու» առեւտրի կենտրոնում տեղի ունեցած ողբերգական դեպքերի համատեքստում մամուլում ռուսական կառույցների հասցեին հնչած մեղադրանքների առնչությամբ:

«Վրդովված ենք տեղական տեղեկատվական տարածքում շրջանառվող ցինիկ նյութերից, որոնք հայհոյախառն ու կեղծ մեղադրանքներ են պարունակում ռուսական կառույցների հասցեին այս տարվա օգոստոսի 14-ի «Սուրմալու» առեւտրի կենտրոնի տարածքում տեղի ունեցած ողբերգությանը ներգրավվածության համար:

Մենք սա համարում ենք ուղղակի սադրանք այն քաղաքական ուժերի կողմից, որոնք կանգնած են նման ակնարկների հետեւում, որոնց նպատակն է խաթարել ռուս-հայկական դաշնակցային հարաբերությունները: Մենք Հայաստանի իշխանություններից ակնկալում ենք քայլեր՝ ուղղված նման անբարյացակամ դրսեւորումները ճնշելուն՝ ներառյալ անհրաժեշտ հանրային մեկնաբանությունները:

Համապատասխան նոտան դեսպանատան կողմից ուղարկվել է ՀՀ արտաքին գործերի նախարարություն: Նշենք, որ ռուսական կողմը՝ ի դեմս Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի, առաջին իսկ րոպեներից ներգրավվել է ողբերգության հետեւանքների վերացման աշխատանքներին», - ասվում է ՌԴ դեսպանատան ֆեյսբուքյան հաղորդագրության մեջ:

Հիշեցնենք, որ օգոստոսի 14-ին «Սուրմալու» առեւտրի կենտրոնի տարածքում տեղի ունեցած ողբերգության հետեւանքով այս պահի դրությամբ ունենք 16 զոհ եւ 2 անհետ կորած քաղաքացի:

ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՎԵԼԱՑԵԼ Է

«Սուրմալու» առեւտրի կենտրոնի հարակից տարածքում օդի աղտոտվածությունը ավելացել է: Այս մասին ArmLur.am-ի հետ զրույցում ասաց ՇՄՆ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի ծառայության պետ Գոհար Հակոբյանը: Արդեն երեք օր է, ինչ «Սուրմալու»-ում տեղի ունեցած պայթյունի հետեւանքով մթնոլորտային օդն աղտոտված է: Հիմնականում փոշու գերազանցում գրանցվել է Շենգավիթ եւ Կենտրոն վարչական շրջաններում:

«Ունենք օգոստոսի 15-16 ընկած ժամանակահատվածի տվյալներ, այսօրվանը դեռ չկա: «Սուրմալու»-ի մոտ տարածքում ունենք շարժական դիտակետեր՝ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի համար, որոնք գերազանցել են: Ծծմբի երկօքսիդը 4.6 անգամ սահմանային թույլատրելի կոնցետրացիան գերազանցել է, իսկ ազոտի երկօքսիդը՝ 2.6 անգամ: Կենտրոնում՝ Կրկեսի մոտ, փոշու խտությունը գերազանցել է 1.4 անգամ, իսկ ազոտի երկօքսիդի կոնցենտրացիան՝ 1.1 անգամ»,- ներկայացրեց Գոհար Հակոբյանը:

Թե երբ կմաքրվի օդը, մասնագետը դժվարացավ հստակ ժամկետ նշել: Նրա խոսքով՝ աղտոտիչներն օդում մնալու հատկություն ունեն, եւ հնարավոր է, որ օրեր շարունակ օդն աղտոտված մնա:

Ի դեպ, մասնագետը խորհուրդ տվեց տանից շատ դուրս չգալ հարակից տարածքներ, դուրս գալուց դիմակ դնել, տան օդը խոնավեցնել, իսկ պատուհաններն էլ հաճախակի չբացել:

Մյուս կողմից՝թոքաբան Նունե Ազիզյանը հորդորում է քրոնիկական շնչառական խնդիրներ, օնկոլոգիա ունեցող, սիրտանոթային պաթոլոգիայով պացիենտներին, հղիներին, հնարավորության դեպքում դուրս գալ քաղաքից: Նա նաեւ խորհուրդ է տալիս բակային տարածքները ջրել:

ԱՀԿ–Ն ՀԱՅՏԱՐԱՐԵԼ Է

Կապիկի ծաղիկի դեմ պատվաստանյութերը 100%-ով արդյունավետ չեն, մարդիկ իրենք պետք է նվազեցնեն վարակվելու վտանգը:

Այս մասին հայտարարել է Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) արտակարգ իրավիճակների ծրագրի՝ ջրծաղիկի դեմ պայքարի քարտուղարության ղեկավար Ռոզամունդ Լյուիսը:

«Պատվաստումները 100%-ով արդյունավետ չեն. դա մեզ հիշեցնում է, որ պատվաստանյութը համադարման չէ, որ յուրաքանչյուր մարդ, որն իրեն ռիսկային է համարում, պետք է կրճատի իր սեռական զուգընկերների թիվը եւ ռիսկային սեռական հարաբերությունները: Պետք է սպասել երկրորդ դեղաչափին, որպեսզի պատվաստանյութը կարողանա օպտիմալ արձագանք տալ»,- ասել է Լյուիսը:

Ավելի վաղ ԱՀԿ-ի ղեկավար Թեդրոս Ադհանոմ Գեբրեյեսուսը հայտարարել էր, որ կազմակերպությունը պլաններ է մշակում ուսումնասիրություններ անցկացնելու համար, որոնք երկրները կարող են օգտագործել պատվաստանյութերի արդյունավետության վերաբերյալ տվյալներ ստանալու համար:

ՈՒՇԱԳՐԱՎ ԱՎԱՐՏ

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Սերգեյ Բագրատյանի որդու՝ Շանթ Բագրատյանի միջադեպով գործը ուշագրավ ավարտ ունեցավ: ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ նախաքննական մարմինը կարճել է ԱԺ պատգամավորի միջադեպով քրեական գործը:

Ահա թե ինչպես են մաքրվում իշխանական պատգամավորների որդիների մասնակցությամբ միջադեպերը:

Հիշեցնենք, որ 2022 թվականի մայիսի 15-ին Վայոց ձորի մարզում՝ գազալցակայանում, ծեծկռտուք էր եղել: Մասնավորապես, 45-ամյա տնօրեն Վահե Ասատրյանին ծեծի էին ենթարկել, եւ միջադեպի կիզակետում հայտնվել էր ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Սերգեյ Բագրատյանի որդին՝ Շանթ Բագրատյանը:

Ըստ լուրերի՝ այս միջադեպին անգամ խառնել է «օրենքով գող» Անդրանիկ Սողոյանը՝ Ջապը, որ ճիշտ ու սխալ անի, թե ով է կռվի մեջ մեղավոր:

ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ Շիրակի մարզի Ախուրյան համայնքում ուշագրավ դեպք է եղել: 43 տարեկան տղամարդը «Շիրակ» գերեզմանատան մոտ հրկիզման միջոցով փորձել է ինքնասպանություն գործել: Վերջինս հայտնել է, որ չի ցանկանում ապրել:

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏ

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ քրեական հեղինակություն Քանաքեռցի Տույի՝ Արթուր Ղազարյանի եւ ԱԺ նախկին պատգամավոր 61-ամյա Արտյուշ Սիմոնյանի սպանության գործով նախաքննության ավարտ կհայտարարվի: Այս պահին քրեական գործով կալանավորված են երեք անձ՝ ԱԺ նախկին պատգամավորի երկու որդիները եւ աղմկահարույց կրակոցով եւս մեկ վկա, որին ամիսներ առաջ էին հայտնաբերել եւ կալանավորել:

Հիշեցնենք, որ 2021 թվականի նոյեմբերի 11-ին Քանաքեռի սեփական տներից մեկում կրակոցներ էին հնչել, ինչի հետեւանքով սպանվել էր 4 անձ, իսկ երեք անձ մարմնական տարբեր վնասվածքներով տեղափոխվել էին հիվանդանոց: Սպանվածների մեջ էր քրեական հեղինակություն Քանաքեռցի Տույը՝ Արթուր Ղազարյանը, եւ ԱԺ նախկին պատգամավոր 61-ամյա Արտյուշ Սիմոնյանը: Վիրավորների մեջ է սպանված նախկին պատգամավորի որդին՝ Վլադիմիր Սիմոնյանը:

Կրակոցներից հետո նախաքննական մարմինը կալանավորել էր սպանված պատգամավորի որդիներին, որոնցից մեկին՝ Հակոբ Սիմոնյանին, օրերս ազատ էր արձակել, եւ նրա ազատման հարցը բողոքարկվել է ՀՀ վճռաբեկ դատարանում:

Ի դեպ, կրակոցները հնչել էին հենց նախկին պատգամավորի տանը: Նշենք, որ Արտուշ Սիմոնյանը 2003թ.-ին մեծամասնականով Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանից էր ԱԺ պատգամավոր ընտրվել: Ի դեպ, հայտնաբերված անձը սպանված նախկին պատգամավորի մտերիմներից է:

ՓՈՐՁ

ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՓՈՐՁՈՒՄ ԵՆ ՄԵԿՈՒՍԱՑՆԵԼ

Վիեննայում եւ Դոհայում ամիսներ տեւած ինտենսիվ բանակցություններից հետո Իրանի միջուկային համաձայնագրի վերսկսման վերաբերյալ վերջնական համաձայնությունը թվում է ավելի հասանելի, քան երբեւէ. IRNA-ն գրում է, թե Իրանն իր կարծիքն է հայտնել՝ ի պատասխան Եվրամիության կողմից ներկայացված Վիեննայի համաձայնագրի փոխզիջումային նախագծի: Երեք հարցում կան տարաձայնություններ, որոնցից երկուսի հարցում ԱՄՆ-ն պատրաստ է ճկունություն ցուցաբերել: Երրորդ խնդիրը պատժամիջոցների վերացման Իրանի պահանջն է:

ԱՄՆ Պետդեպարտամենտի խոսնակ Նեդ Փրայսը հայտարարել է, որ եթե Իրանը պատրաստ է վերադառնալ գործարքին, ապա Ամերիկան պատրաստ է: Միաժամանակ Նեդ Փրայսը նշել է, որ եթե Իրանը չկարողանա կամ պատրաստ չէ ամբողջությամբ իրականացնել համաձայնագիրը, ապա պատժամիջոցները կպահպանվեն:

Իրանի արտգործնախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահիանն ասել է, որ ամերիկացիները Կոնգրեսի ընտրությունների նախաշեմին կուլիսներում խոսում են բենզինի, էներգիայի հետ կապված խնդիրների մասին եւ օգնություն խնդրում:

Այս համատեքստում Հայաստանը մեկուսացնելու հարցը, ի թիվս այլ բաների, դիտվում է որպես Իրանի մուտքը համաշխարհային շուկա խոչընդոտելու փորձ: Իրանի նախկին արտգործնախարարն իր հրաժարականի նախօրեին հայտարարել էր, որ Ռուսաստանը խոչընդոտում է միջուկային գործարքի վերականգնմանը:

Այժմ Ռուսաստանն ու Թուրքիան փորձում են արգելափակել հայ-իրանական սահմանը եւ Հայաստանի ու Վրաստանի տարածքով դեպի Եվրոպա հնարավոր հաղորդակցությունները: Այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքը» հայ-իրանական սահմանի շրջափակումն է եւ Հայաստանի հարավի բռնակցումը:

Իրանի ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Նասեր Քանանին կրկին հայտարարեց՝ պատասխանելով Հայաստանի մասին հարցին. «Մենք կոչ ենք անում պահպանել միջազգային սահմանները եւ պահպանել աշխարհաքաղաքական պայմանները տարածաշրջանում»:

Իրանի համար տարածաշրջանում աշխարհաքաղաքական փոփոխություններն անընդունելի են. այս մասին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ հեռախոսազրույցի ժամանակ հայտարարել է Իրանի նախագահ Իբրահիմ Ռաիսին:

Հիշեցնենք, որ հուլիսի 19-ին Իրանի հոգեւոր առաջնորդ Ալի Խամենեին Ռուսաստանի եւ Թուրքիայի նախագահներ Պուտինի եւ Էրդողանի հետ հանդիպման ժամանակ ասել էր, որ Թեհրանը դեմ է Իրանի եւ Հայաստանի միջեւ սահմանը փակելուն եւ հակազդելու է այդ քաղաքականությանը:

Իրանի եւ ԱՄՆ-ի միջեւ միջուկային գործարքի վերսկսումը կարող է հանգեցնել տարածաշրջանում մեծ վերափոխումների եւ Հայաստանի իրավիճակի ու դերակատարության փոփոխության:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍ

ՀՀ ԱԳ նախարարի՝ ս.թ. օգոստոսի 17-ի հրամանով՝ Լեւոն Մինասյանը նշանակվել է Դոնի Ռոստովում ՀՀ գլխավոր հյուպատոս: Այդ մասին հայտնում են ՀՀ ԱԳՆ-ից:

Հիշեցնենք, որ Լեւոն Մինասյանն օրերս, Նիկոլ Փաշինյանի որոշմամբ, ազատվել է պետական արարողակարգի ծառայության պետի պաշտոնից:

ԻՋԵՑՎԵԼ ԵՆ ԴՐՈՇՆԵՐԸ

Հայաստանում հայտարարված երկօրյա սգի կապակցությամբ իջեցվել է կառավարության շենքին տեղադրված ՀՀ պետական դրոշը:

Երեւանում բրիտանական դեսպանատան առջեւ իջեցվել է Միացյալ Թագավորության դրոշը՝ ի հիշատակ օգոստոսի 14-ին «Սուրմալու» առեւտրի կենտրոնում տեղի ունեցած պայթյունի զոհերի: Այս մասին տեղեկանում ենք Հայաստանում Բրիտանիայի դեսպանության տարածած հաղորդագրությունից:

Երկօրյա սգի կապակցությամբ իջեցվել են Եվրոպայի խորհրդում Հայաստանի մշտական ներկայացուցչության եւ Եվրոպայի խորհրդի կենտրոնակայանի դիմաց ծածանվող Հայաստանի դրոշները:

ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ԳԵՐԻՆԵՐ

Ադրբեջանի մարդու իրավունքների հանձնակատարի (օմբուդսմենի) հանձնարարականով խոշտանգումների կանխարգելման ազգային կանխարգելիչ խմբի անդամներն այցելել են ժամանակավոր պահման վայրեր, առանց նախնական ծանուցման:

Ինչպես հայտնում են տեղի լրատվամիջոցները, նրանք հանդիպել են Բաքվում պահվող հայ ռազմագերիների հետ: Գաղտնի ընդունելությունների շրջանակում տեղի ունեցած զրույցի ընթացքում պարզվել է, որ յուրաքանչյուր գերու համար «ապահովվում է» հեռախոսային կապ, նամակագրություն, կապ ընտանիքի անդամների հետ, տեղեկատվության հասանելիություն (հեռուստատեսություն, հրապարակումներ) եւ բուժօգնություն: Նշվում է, որ ռազմագերիները չեն բողոքել պահման եւ բուժման պայմաններից:

ՉԻ ԿԱՏԱՐՎԵԼ

«ՍՈՒՐՄԱԼՈՒ»-Ն ՓԱԿԵԼՈՒ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

«Ժողովուրդ» օրաթերթի ձեռքում է հայտնվել բացառիկ փաստաթուղթ: 2021 թվականի ապրիլի 6-ին «Սուրմալու» առեւտրի կենտրոնում բռնկված հրդեհի գործով առեւտրի կենտրոնի տնտեսվարողներից տուժած խաղաղացու փաստաբան Տիգրան Մուրադյանը միջնորդություն է ներկայացրել Երեւան խաղաղի դատախազ Սեւակ Հովհաննիսյանին, մի շարք կասկածներ խախտումների մասին արձանագրել եւ հորդորել միջոցներ ձեռնարկել, որպեսզի դադարեցվի «Սուրմալու» առեւտրի կենտրոնի գործունեությունը: Երեւան խաղաղի դատախազ Սեւակ Հովհաննիսյանը որեւէ պատասխան չի տվել փաստաբանին: Այս գործով մեկ տարի շարունակ կոնկրետ անգործության է մատնված եղել Գլխավոր դատախազությունը՝ ի դեմս Երեւան խաղաղի դատախազ Սեւակ Հովհաննիսյանի:

Շուրջ 1 տարի անգործության է մատնված եղել ՀՀ քննչական կոմիտեն, քանի որ 2021 թվականի ապրիլի 6-ին «Սուրմալու» առեւտրի կենտրոնում բռնկված հրդեհի գործով փորձագիտական եզրակացությունը մեկ ամիս առաջ է միայն ստացվել: Մասնագիտական եզրակացությամբ հաստատվել է, որ առեւտրի կենտրոնի ղեկավարությունը չի պահպանել անվտանգության կանոնները, սակայն մեկ ամիս անց ստացված փորձաքննության արդյունքներով նոր են մեղադրյալի հարց բարձրացնում, եւ որեւէ մեկը չկա կալանավորված: Եթե մեկ տարի առաջ Գլխավոր դատախազությունը քնած չլիներ եւ պատշաճ ուսումնասիրեր փաստաբանի միջնորդությունը, որտեղ բազմաթիվ խախտումների մասին էր բարձրաձայնել փաստաբանը, եւ դեռ ավելին՝ քննիչ էլ փափուկ բարձ չդներ փաստաբանի գլխի տակ, թե հարցը կքննարկեն փորձաքննության արդյունքները ստանալուց հետո, այսօր չէինք ունենան 16 զոհ:

Փաստաբանը մի քանի դրույթ էր ներկայացրել՝

- միջոցներ ձեռնարկել, որպեսզի թիվ 12106321 քրեական գործով դատաշինարարատեխնիկական, դատահրդեհատեխնիկական եւ դատաապրանքագիտական համալիր փորձաքննություն նշանակելու մասին 07.04.2021թ. քննիչի որոշմամբ նշանակված փորձաքննությամբ պարզաբանման համար առաջադրվի 7, նաեւ՝ սույն բողոքի 7-րդ կետում նշված բոլոր հարցերը, 8-րդ կետից բխող հարցերը, փորձագետներին տրամադրվի ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնի 31.05.2021թ. գրությունը, դրան կից 06.04.2021թ-ի հրդեհային եւ տեխնիկական անվտանգության ստուգումներ անցկացնելու մասին Հ/217/2021 ակտը եւ 26.04.2021թ-ի վարչական տույժ նշանակելու մասին Հ/217-2021 որոշումը,
- միջոցներ ձեռնարկել, որպեսզի թիվ 12106321 քրեական գործը քննվի առանց ձգձգումների, նշանակված դատաշինարարատեխնիկական, դատահրդեհատեխնիկական եւ դատաապրանքագիտական համալիր փորձաքննությունն իրականացվի ողջամիտ ժամկետում՝նման փորձաքննությունների կատարման համար ՊՈԱԿ-ի կանոնակարգով սահմանված ժամկետում՝ հաշվի առնելով հրդեհի հետեւանքով տուժած տնտեսվարողների շահերը, ձեռնարկատիրական գործունեության խափանումը, սեփականության իրավունքի խախտումը եւ այդ ամենով պայմանավորված փորձաքննության կատարման ժամկետների ձգձգման բացասական հետեւանքները,
- միջոցներ ձեռնարկել, որպեսզի բացառվի ՊՈԱԿ-ի փորձագետների նկատմամբ ընկերության շահերից բխող եւ այդ ընկերության օգտին եզրակացություն ստանալու նպատակ հետապնդող գործողությունների կատարումը,
- միջոցներ ձեռնարկել, որպեսզի թիվ 12106321 քրեական գործին տրվի արագ ընթացք, իրականացվի լրիվ, օբյեկտիվ եւ բազմակողմանի քննություն գործի իրական հանգամանքները պարզելու եւ մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու համար,
- միջոցներ ձեռնարկել, որպեսզի կալանք կիրառվի առեւտրի կենտրոնի սեփականատեր ընկերության գույքի վրա՝ քաղաքացիական հայցը եւ դատական ծախսերն ապահովելու համար,
- հաշվի առնելով սույն բողոքի 2-րդ եւ 3-րդ կետում նշված հանգամանքները՝ միջոցներ ձեռնարկել, որպեսզի դադարեցվի «Սուրմալու» առեւտրի կենտրոնի գործունեությունը,
- միջոցներ ձեռնարկել, որպեսզի քրեաիրավական գնահատական տրվի թիվ 12106321 քրեական գործով ՀՀ քննչական կոմիտեի Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի քննիչի գործողություններին, անգործությանը եւ թերացումներին,
- միջոցներ ձեռնարկել, որպեսզի թիվ 12106321 քրեական գործով վարույթն իրականացնող քննչական մարմինը քննություն իրականացնի սույն բողոքի 9-րդ կետում նշված բոլոր հանգամանքների վերաբերյալ:

Ք.Մ.

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ

ԻՐԱՎԱՊԱՀՆԵՐԸ ՄՏԵԼ ԵՆ ԴԱՏԱՐԱՆ

Ինչպես հայտնի է, Երեւան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազի տեղակալ Կորյուն Ներսիսյանի կալանքը եւս երկու ամսով երկարաձգվեց: ArmLur.am-ը գրել էր, որ դատախազ Կորյուն Ներսիսյանը կաթողիկոս Գարեգին Բ-ի եղբորորդին է, որի քրեական գործով շոշափվում է նաեւ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի նախագահ Էդգար Հովհաննիսյանի եւ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արթուր Ադամյանի անունները:

Ի դեպ, ArmLur.am-ին հասած հավաստի տեղեկությունների համաձայն՝ քրեական գործով շոշափվող Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի նախագահ Էդգար Հովհաննիսյանի հայրը՝ Էդիկ Հովհաննիսյանը, նախկինում աշխատել է ԱԱԾ-ում եւ եղել է Արմավիրի մարզի ԱԱԾ վարչության պետը:

Հիշեցնենք, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից ՀՀ դատախազության հետ համագործակցությամբ ձեռնարկված մեծածավալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ Երեւան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազի տեղակալ Կ.Ն.-ն, հանդիսանալով պաշտոնատար անձ, Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում քննվող քրեական գործով ամբաստանյալ Ն.Դ.-ի նկատմամբ մեղմ պատիժ նշանակելուն պաշտոնեական դիրքն օգտագործելով նպաստելու համար Գ.Գ.-ի եւ Ն.Ա.-ի օժանդակությամբ եւ միջնորդությամբ Ն.Դ.-ից ստացել է առանձնապես խոշոր չափերով՝ 2.500.000 ՀՀ դրամ կաշառք:

Դատախազ Ներսիսյանը չի ընդունում մեղադրանքը: ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ այս քրեական գործի շրջանակներում նախաքննական մարմինը մտել է Արմավիրի մարզի դատարան եւ քննչական գործողություններ է իրականացրել ինչպես դատարանի նախագահի, այնպես էլ գործով այլ դատավոր Արթուր Ադամյանի աշխատասենյակում: Փորձեցինք տեղեկությունն անձամբ պարզել դատարանի նախագահ Էդգար Հովհաննիսյանից. «Մենք որեւէ առնչություն չունենք. դա մի քիչ գաղտնի է, չեմ կարող փակագծերը բացել»: Ըստ էության, դատարանի նախագահ Հովհաննիսյանը ո՛չ հերքեց, ո՛չ էլ հաստատեց մեր տեղեկությունը:

Ք.Մ.

ԼՈՒՐԵՐ

ՎԹԱՐ

Երեւան-Արմավիր ավտոճանապարհի 16 կմ հատվածում բախվել են Արմավիրի մարզի բնակիչներ 33-ամյա Հովհաննես Վ-ի վարած Toyota մակնիշի եւ 41-ամյա Արարատ Մ-ի վարած Lada մակնիշի ավտոմեքենաները:

Վթարի հետեւանքով 2 վարորդներն ու Lada-ի ուղեւոր, Արմավիրի մարզի բնակիչ 70-ամյա Հասմիկ Մ-ն մարմնական վնասվածքներով տեղափոխվել են «Վաղարշապատ» ԲԿ:

ՋՐԱԽԵՂԴ Է ԵՂԵԼ

2022թ. օգոստոսի 17-ին՝ ժամը 10:45-ի սահմաններում, ԱՀ Մարտունու շրջանի Գիշի համայնքի վարչական տարածք հանդիսացող Բերդունց բաղ կոչվող տեղամասում տեղակայված ջրամբարում նույն համայնքի անչափահաս բնակիչ, 2006թ. ծնված Գ. Բ.-ն լողանալու ժամանակ ջրախեղդ է եղել ու մահացել:

ՀՈՐԴՈՐ՝ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ

ՀՀ քննչական կոմիտեն հորդորում է բոլոր այն քաղաքացիներին, որոնք «Սուրմալու» առեւտրի կենտրոնից ձեռք են բերել, սակայն դեռեւս չեն օգտագործել հրավառության համար նախատեսված նյութեր եւ պարագաներ, դրանք չօգտագործել եւ նշված իրերը ներկայացնել ՀՀ ոստիկանության՝ իրենց բնակության վայրի բաժիններ: ՔԿ-ն վստահեցնում է, որ նշված գործողությունը քաղաքացիների համար չի առաջացնի որեւէ իրավական հետեւանքներ:

ՀԱՐՑԱՔՆՆՎԵԼ ԵՆ

«Սուրմալու» առեւտրի կենտրոնում տեղի ունեցած պայթյունի գործով հարցաքննվել է 50-ից ավելի մարդ՝ տաղավարի սեփականատերեր, տուժածներ: Այս մասին ասաց Քննչական կոմիտեի մամուլի խոսնակ Վարդան Թադեւոսյանը՝ հավելելով, որ առեւտրի կենտրոնի սեփականատերը դեռ չի հարցաքննվել:

ԿԱՆԵՓՆ ԻՐԵՆՆ Է

Ոստիկանության Կապանի բաժնում տեղեկություններ էին ստացվել, որ Կապան քաղաքի Շահումյան փողոցի 39-ամյա մի բնակիչ Քաջարանի փակ բաժնետիրական ընկերություններից մեկի տարածքում կանեփ է աճեցնում:

Ոստիկանության լրատվական բաժնից փոխանցում են, որ օգոստոսի 16-ին ՔՈԳՎ թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչության եւ Կապանի բաժնի քրեական հետախույզները նշված ընկերության պահակետի հետնամասում հայտնաբերեցին կանեփի 6 բույս, իսկ հանդերձարանի պահարանից՝նույն բույսից պատրաստված յուրահատուկ հոտով դեղնականաչավուն, չորացված, մանրացված զանգված: 39-ամյա տղամարդը խոստովանել է, որ բուսական զանգվածն ու կանեփի թփերը իրենն են, կանեփն ինքն է աճեցրել, մշակել անձնական օգտագործման համար: Նախաձեռնվել է քրեական վարույթ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ օգոստոսի 15-ից 16-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 54 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՁ

ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՂՈՔԱՐԿԵԼ Է

Իջեւանի բժշկական կենտրոնի տնօրեն, Երեւան քաղաքի բնակիչ, 1973թ. ծնված Էդուարդ Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ նա, 2009թ.-ի հունվարից մինչեւ 2019թ. հուլիսի 1-ը հանդիսանալով ՀՀ ՊՆ զորամասի (Բերդի առանձին բժշկական ջոկատ) հրամանատար, պաշտոնատար անձ, կոչումով բուժծառայության փոխգնդապետ, պարտավոր լինելով հոսպիտալում քաղաքացիական անձանց անվճար բուժսպասարկելուց առաջ պահպանել ՀՀ-ում գործող համապատասխան օրենսդրությամբ եւ մի շարք իրավական ակտերով նախատեսված դրույթների պահանջները, անփույթ վերաբերմունք է դրսեւորել ծառայության նկատմամբ, առանց հաստատված գնացուցակով սահմանված 200.000 դրամ գումարը գանձելու, 2019թ. հունվարի 23-ին վիրահատել է Պառավաքար գյուղի բնակիչ Անահիտ Աղաջանյանին, ապա օրենքի խախտմամբ 2019թ. հունվարի 29-ին, առանց հաստատված գնացուցակով սահմանված 180.000 դրամ գումարը գանձելու, վիրահատել է Մովսես գյուղի բնակիչ Վոլոդյա Ավալյանին, սահմանված դրույթների խախտմամբ 2019թ. հունվարի 30-ին, առանց հաստատված գնացուցակով սահմանված 150.000 ՀՀ դրամ գումարը գանձելու, վիրահատել է Նավուր գյուղի բնակիչ Ալիսա Մարդանյանին, 2019թ. փետրվարի 25-ին, առանց հաստատված գնացուցակով սահմանված 140.000 դրամ գումարը գանձելու, վիրահատել է Վազաշեն գյուղի բնակիչ Գայանե Ամիխանյանին, ինչի արդյունքում էական վնաս է պատճառվել, ընդհանուր 670.000 ՀՀ դրամ գումար զինհոսպիտալի դրամարկղ չի վճարվել:

Է. Գրիգորյանը պետությանը պատճառած 670.000 դրամ գումարը նախաքննության ընթացքում ամբողջությամբ վերականգնել է: Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Ռաֆիկ Մելքոնյանը 2019թ. հոկտեմբերի 17-ին որոշում է կայացրել քրեական գործի վարույթը կարճելու եւ Է. Գրիգորյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2020թ. փետրվարի 21-ին որոշում է կայացրել Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանելու եւ նոր քննության ուղարկելու մասին:

2020թ. հունիսի 10-ին քրեական գործը ստացվել է ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում եւ մակագրվել դատավոր Սամվել Մարդանյանին: 2022թ. հունիսի 17-ին դատավոր Ս. Մարդանյանը վճռել է Էդուարդ Գրիգորյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասով, վաղեմության ժամկետն անցնելու հիմքով Է. Գրիգորյանին ազատել ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական պատասխանատվությունից: Դատախազությունը բողոքարկել է այդ վճիռը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՆՈՐ ՈՐՈՇՈՒՄ

ՏՈՒԳԱՆՔՆԵՐԸ ԿԽՍՏԱՑՎԵՆ

Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու կարգի խախտման համար սահմանված պատժամիջոցները կխստացվեն:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 140-րդ հոդվածով՝ ճանապարհները, երկաթուղային գծանցները եւ ճանապարհի այլ ինժեներական կառույցները վնասելու համար սահմանված 25 հազար դրամ տուգանքի չափը կկրկնապատկվի՝ հասնելով 50 հազար դրամի: Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների կողային առուները ոռոգման նպատակով օգտագործելու, երթեւեկամասի եւ կողնակների վրա կողմնակի առարկաներ թողնելու, չնախատեսված հատվածներում տրանսպորտային միջոցների ճանապարհից դուրս գալու կամ ճանապարհ մտնելու, ինժեներական շինությունների վնասման եւ աղտոտման համար միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մասով կնշանակվի 80 հազար դրամի չափով տուգանք, հանրապետական եւ մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մասով՝ 40 հազար դրամ: Բացի այս, ճանապարհային երթեւեկության կազմակերպման տեխնիկական միջոցները վնասելը, փակելը, հանելը կամ տեղադրելը, ինչպես նաեւ ճանապարհային երթեւեկության համար խոչընդոտներ ստեղծելը, այդ թվում՝ ճանապարհի ծածկույթը աղտոտելու, առանց համապատասխան թույլտվության ճանապարհի վրա բացօթյա առեւտուր իրականացնելու, շինարարական նյութեր կամ այլ իրեր ու առարկաներ ճանապարհին թողնելու, ինքնակամ ճանապարհային նշաններ, արգելապատնեշների տեղադրելը կամ ապամոնտաժելը, ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների երթեւեկելի մասով կամ բաժանարար գոտիով անասուններ քշելը, եթե այդ արարքը մարդու առողջությանն անզգուշությամբ պատճառել է ծանր կամ միջին ծանրության վնաս, պատժվում է տուգանքով՝ 10 հազար դրամից 20 հազար դրամի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հիսունից հարյուր ժամ տեւողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով:

Իսկ նախատեսված արարքը, որն անզգուշությամբ երկու կամ ավելի անձանց առողջությանը պատճառել է ծանր կամ միջին ծանրության վնաս, պատժվում է տուգանքով՝ 20 հազար դրամից 30 հազար դրամի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:

Իսկ եթե նույն արարքը անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով: Նշենք նաեւ, որ նույն արարքը եթե անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի մարդու մահ, պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով:

Բացի այս, ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների երթեւեկելի մասով եւ բաժանարար գոտիով անասուններ քշելու, ճանապարհի պաշտպանական գոտում առանց մշտական հսկողության անասուն արածեցնելու համար կնշանակվի տուգանք՝ 10 հազար դրամի չափով:

Նշենք, որ վերջին 10 տարիներին Հայաստանում ՃՏՊ-ների հետեւանքով զոհերի թիվն աճել է. եթե 2010 թվականին այդ թիվը 294 էր... ապա 2020 թվականին այն հասել է 348-ի, իսկ 2021 թվականին՝ 367-ի:

ArmLur.am-ը տեղեկացավ նաեւ, որ արձանագրվել են ճանապարհային նշանները փակելու, հանելու, անօրինական նշաններ տեղադրելու կամ ճանապարհային նշանների գողության, ինչպես նաեւ ճանապարհային երթեւեկության համար խոչընդոտներ ստեղծելու բազմաթիվ դեպքեր: Օրինապահ մարմինների կողմից բազմաթիվ դեպքեր են բացահայտվել նաեւ, երբ գողացված ճանապարհային նշանները վերջիններիս կողմից օգտագործվել են կենցաղային նպատակներով, հատկապես՝ գյուղերում:

ՍՅՈՒՆԻՔ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀՐԱՎԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԸ ԿԽՍՏԱՑՎԻ

Ազգային ժողովի աշնանային նստաշրջանում նախատեսվում է քննարկման ներկայացնել հրավառությունների կազմակերպման կարգի խստացման նախագիծը: Այս մասին ճշեց «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության անդամ Տիգրան Ավինյանը, որը եկել էր «Սուրմալու» առեւտրի կենտրոնի տարածք՝ ծանոթանալու պայթյունից հետո իրականացվող որոնողափրկարարական աշխատանքներին:

«Որոնողափրկարարական աշխատանքները մոտենում են ավարտին: Ես հատուկ ուզում եմ ընդգծել փրկարարների աշխատանքի որակը եւ շնորհակալություն հայտնել նրանց: Ինչ վերաբերում է տեղի ունեցած ողբերգությանը, ապա այն շատ ցավալի է ու սթափեցնող: Վստահ եմ՝ սա կլինի առիթ մտածելու նման նյութերի պահպանման, մեր մասնավոր առիթներին հրավառություն անցկացնելու վերաբերյալ: Դեռ 2021 թվականին քննարկվել ու կառավարության կողմից հավանության էր արժանացել մի նախագիծ, որը գրեթե սահմանափակում էր հրավառական միջոցների օգտագործումը մասնավոր միջոցառումների ժամանակ: Նման միջոցների օգտագործումը նախագծով թույլատրվում էր միայն պետական, համայնքային տոների ժամանակ: Կա մեծ գործարար ոլորտ, որը փոխկապակցված է այս հարցին, սակայն կարծում եմ, որ այդ կոշտ որոշումը պետք է ամեն դեպքում կայացվի: Խոսել եմ պատգամավոր Սիսակ Գաբրիելյանի հետ, որը համահեղինակն է այդ նախագծի, եւ ԱԺ առաջին նստաշրջանի ժամանակ հարցն արտահերթ կքննարկվի»,- ասաց Տիգրան Ավինյանը:

Լրագրողները հետաքրքրվեցին, թե արդյոք բավարար չափով վերահսկողություն չի իրականացվում. չէ՞ որ տեսչական մարմինն արձանագրել էր բազմաթիվ խախտումներ՝ հրդեհային անվտանգության պահպանման հարցերի հետ կապված: Ի պատասխան լրագրողների հարցադրմանը՝ Տիգրան Ավինյանը նշեց, որ 4 տոննա հրավառական նյութերի պահպանումը մեկ տեղում արդեն իսկ շատ մեծ ռիսկ է: Այդ պարագայում նույնիսկ լավագույն հովացման համակարգերն արդյունավետ չէին լինի:

«4 տոննա հրավառական նյութերի պահպանումը մեկ տեղում մեծ վտանգ է ներկայացնում: Փոքր կայծը կարող է բերել նման հետեւանքների: Հարուցված է քրեական գործ, որի շրջանակում կպարզաբանվեն բոլոր հարցերը: Դրանից բացի, ես կարծում եմ, որ ինքներս պետք է կարողանանք հրավառության այս մշակույթից հրաժարվել: Պարտադիր չէ, որ մեր առիթին մասնակցեն 10 կմ հեռավորության վրա գտնվող շենքերի, տների բնակիչները. մի կողմից՝ խաթարում ենք այդ մարդկանց անդորրը, մյուս կողմից՝ տեսնում ենք, թե նման նյութերի պահպանումը ինչ հետեւանքի կարող է բերել»,-ասաց Տիգրան Ավինյանը:

Նա ընդգծեց, որ կառավարությունը պետք է անդրադառնա ինչպես այս, այնպես էլ այլ տեղերում պահվող վտանգավոր թափոնների հարցին:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 17 ՃՏՊ. 21 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԱՂԵՏՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՐԿՕՐՅԱ ՍՈՒԳ Է

Հայաստանի Հանրապետությունում եւ Արցախում երեկ եւ այսօր՝ օգոստոսի 17-18, հայտարարվել են սգո օրեր՝ ի հիշատակ Սուրմալու առեւտրի կենտրոնի պայթյունի հետեւանքով մահացածների:

Սգո օրերին, «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» օրենքի 4-րդ հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետության դրոշը իջեցվում է մինչեւ դրոշաձողի մեջտեղը: Դրոշի վերեւի մասում ամրացվում է սեւ ժապավեն, որի երկարությունը հավասարեցվում է դրոշի երկարությանը:

«Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ պետության կողմից հայտարարված սգո օրերին գովազդի եւ զվարճալի հաղորդումների հեռարձակումը հեռուստառադիոընկերությունների կողմից արգելվում է:

Սուգ, ինչպես մեզ մոտ, այնպես էլ տարբեր երկրներում հայտարարվում է բնական աղետների, խոշոր վթարների եւ օդային աղետների, ահաբեկչական ակտերի կապակցությամբ:

Հայաստանում սգո օր հայտարարվել է նաեւ՝

- 1992 թվականի ապրիլի 17-ին՝ Արցախի գերագույն խորհրդի նախագահ Արթուր Մկրտչյանի հուղարկավորության օրը,
- 1994 թվականի օգոստոսի 26-28-ին Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի մահվան կապակցությամբ,
- 1999 թվականի հուլիսի 6-8-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ի մահվան կապակցությամբ,
- 1999 թվականի հոկտեմբերի 29-31-ին 1999 թվականի հոկտեմբերի 27-ի ահաբեկչական գործողության զոհերի հիշատակը հարգելու կապակցությամբ,
- 2006 թվականի մայիսի 5-6-ին 2006 թվականի մայիսի 3-ին Երեւան-Սոչի ինքնաթիռի վթարի հետեւանքով զոհված 113 մարդու հիշատակը հարգելու կապակցությամբ,
- 2007 թվականի մարտի 28-ին Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարյանի մահվան կապակցությամբ,
- 2009 թվականի հուլիսի 16-ին Թեհրան-Երեւան չվերթն իրականացնող օդանավի վթարի կապակցությամբ, երբ զոհվեցին ինքնաթիռի ողջ անձնակազմը՝ 168 հոգի,
- 2018 թվականի հոկտեմբերի 6-ին՝ Հայաստանի ազգային հերոս, նշանավոր երգիչ, երգահան, գրող, կինոդերասան եւ հասարակական գործիչ Շառլ Ազնավուրի հուղարկավորության օրը,
- 2020 թվականի դեկտեմբերի 19-21-ին 44 օրյա պատերազմում զոհվածների հիշատակի կապակցությամբ:

ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ

ԲՈԼՈՐ ԾՆՈՂՆԵՐԸ ԿՍՏԱՆԱՆ ՆՊԱՍՏ

Կառավարությունն առաջարկում է փոփոխություն կատարել «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում:

Նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-L որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ցանկի «Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն» բաժնի 17.2-րդ կետով: Օրենքի գործող կարգավորումների համաձայն՝ խնամքի նպաստ նշանակվում է խնամքի արձակուրդում գտնվող վարձու աշխատողին, ինչպես նաեւ երեխայի ծննդյան կամ դիմելու օրվա դրությամբ առնվազն մեկ տարի գյուղական բնակավայրի հաշվառում ունեցող եւ փաստացի բնակվող ծնողին՝ անկախ աշխատելու հանգամանքից: Առաջիկա տարիներին ծնելիության կայուն աճ ապահովելու, իսկ երկարաժամկետ հեռանկարում՝ հանրապետության բնակչության թվի էական աճ գրանցելու նախադրյալների ստեղծման նպատակով Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի որոշման հավելվածի՝ «Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն» բաժնի 17.2-րդ կետով նախատեսված է, որ 2023թ. հունվարի 1-ից մինչեւ 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ նշանակվում է բոլոր մայրերին՝ անկախ նրանց հաշվառման (բնակության) վայրի: Այս դեպքում պետական աջակցությունը հասանելի կլինի մինչեւ 2 տարեկան երեխայի խնամքով զբաղված բոլոր ծնողներին՝ անկախ նրանց աշխատելու կամ գյուղաբնակ լինելու հանգամանքից:

Նման մոտեցման հիմքում ընկած է 2 փաստ: 2020 թվականի հուլիսի 1-ից հետո, երբ խնամքի նպաստի իրավունք տրվեց նաեւ չաշխատող գյուղաբնակ ծնողներին, քաղաքաբնակ ծնողները արտահայտեցին իրենց դժգոհությունը՝ փաստարկելով, որ քաղաքներում երեխային խնամելը նույնպես ծախսատար է եւ արժանի է պետական հոգածության:

Բացի այդ, նախորդ տարիների իրավակիրառ պրակտիկան ցույց տվեց, որ գյուղաբնակ ծնողի համար խնամքի նպաստի իրավունքի իրացման առանձնահատկություն սահմանելը չի ծառայում իր նպատակին, քանի որ գործնականում քաղաքացիների հաշվառման եւ փաստացի բնակության վայրերը տարբեր են: Ըստ այդմ, խնամքի նպաստի նոր գաղափարախոսությունից (այս նպաստի իրավունք տրվում է բոլոր ծնողներին՝ անկախ հաշվառման կամ փաստացի բնակության վայրից) ելնելով՝ նշված առանձնահատկությունը նպատակահարմար է վերանայել (հանել):

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ փոխվում է խնամքի նպաստի գաղափարախոսությունը, անհրաժեշտություն է առաջանում վերանայել խնամքի իրավունքի իրացման՝ նշանակման, վճարման, ստանալու իրավունքը դադարեցնելու եւ վերականգնելու, վճարումը դադարեցնելու եւ վերսկսելու պայմանները, սահմանելու տարբերակված չափեր:

Գործող իրավակարգավորումներով խնամքի նպաստի չափը սահմանում է Կառավարությունը: Քանի որ խնամքի արձակուրդում գտնվող ծնողը կորցնում է իր եկամուտը, նպատակահարմար է խնամքի արձակուրդում գտնվող ծնողի համար խնամքի նպաստի չափը սահմանել ավելի բարձր:

Հարկ է նշել, որ համանման մոտեցում կիրառված է մայրության նպաստի համակարգում. աշխատող ծնողի մայրության նպաստը հաշվարկվում է եկամտից, իսկ չաշխատող ծնողինը՝ նվազագույն ամսական աշխատավարձի 50 տոկոսից:

Ըստ այդմ, անհրաժեշտություն է առաջացել համապատասխան փոփոխություններ կատարել «Պետական նպաստների մասին» օրենքում: Առաջարկվում է ընդունել ««Պետական նպաստների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը: Ներկայացվող նախագծով առաջարկվում է խնամքի նպաստ նշանակել ՀՀ-ում բնակության վայրի հաստատով հաշվառում ունեցող եւ մինչեւ երկու տարեկան երեխա խնամող ծնողին՝ անկախ հաշվառման վայրից եւ վարձու աշխատող հանդիսանալու հանգամանքից: Օրենքի գործողությունը տարածվելու է այն դեպքերի վրա, երբ երեխան ծնվել է 2023 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո: Ընդ որում՝ վարձու աշխատողների եւ գյուղաբնակ ծնողի համար գործող օրենսդրական կարգավորումները գործելու են, եթե երեխան ծնվել է մինչեւ 2023 թվականի հունվարի 1-ը, իսկ գյուղաբանկ ծնողի դեպքում՝ նաեւ եթե դիմումը ներկայացվել է մինչեւ 2023 թվականի դեկտեմբերի 31-ը: Նախագծով առաջարկվում է սահմանել, որ խնամքի նպաստի չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

1) խնամքի արձակուրդում գտնվող ծնողին՝ տոկոսով «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքի 1-ին հոդվածով սահմանված չափի նկատմամբ,

2) խնամքի արձակուրդում չգտնվող ծնողին՝ խնամքի արձակուրդում գտնվող ծնողի համար սահմանված չափի 85 տոկոսը չգերազանցող չափով:

Խնամքի արձակուրդում գտնվող գյուղաբնակ ծնողին խնամքի նպաստ կվճարվի խնամքի արձակուրդում գտնվող եւ չգտնվող ծնողերի համար սահմանված չափերի հանրագումարի չափով: Պահպանելով գործող կարգավորումներով սահմանված՝ խնամքի նպաստի իրավունք տվող հիմնական պայմանները եւ ժամկետները՝ նախագծով առաջարկվում է վերանայել խնամքի նպաստի իրավունքի իրացման մյուս պայմանները՝ դրանք չփոխկապակցելով աշխատանքից ազատվելու կամ բնակության վայրը փոխելու հետ:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում.

1. Իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը.

- Գեղարքունիքի մարզ, համայնք Վարդենիս ք., Ա. Սեսմանուկյան փողոց, 13 շենք, 24 հասցեում գտնվող 72.5 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 4300000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 05.09.2022թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ եւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 05.10.2022թ.-ին:

2. Շարունակելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետ—յալ լոտի բաց աճուրդը.

- Լոռու մարզ, համայնք Վանաձոր ք., Նարեկացու փողոց, 37 շենք, 10 հասցեում գտնվող 46,2 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 2265394 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը հոլանդական եղանակով՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 05.09.2022թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 05.10.2022թ.-ին:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.akson.am կայքեր:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՎԱԽԵՑԵՔ

ՀԱՅՏՆԻՆԵՐԸ՝ «ՍՈՒՐՄԱԼՈՒ»-Ի ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Օգոստոսի 14-ին «Սուրմալու» առեւտրի ողբերգական պայթյունը ցնցեց ողջ հայ ժողովրդին: Այս ամենից անմասն չեն մնացել, իրենց վշտով են կիսվել նաեւ հայկական շուրջիզնեսի ներկայացուցիչները եւ հրաղարակումներով հանդես եկել:

Երգչուհի Անահիտ Շահբազյանն «Ինստագրամ» սոցիալական ցանցում «Սուրմալու» մեծածախ առեւտրի կենտրոնում տեղի ունեցած պայթյունից հետո իրականացվող որոնողափրկարարական աշխատանքների ժամանակ արված կադրեր է հրապարակել, որոնց կից գրել է.

«Վախեցե՛ք անտարբեր ու անսիրտ հայից, վախեցե՛ք անկիրթ ու գոռոզ հայից, վախեցե՛ք մեր երկրի սեռափոխվածներից, վախեցե՛ք անհավատ ու անաստված հայից, որովետեւ այս մարդիկ անձապաշտ են ու եսասեր:

Հայրենիք բառի իմաստը նրանց ուղեղում միայն պաթոս է ու ֆեյսբուքյան էջի լավ գրառում:

Աշխարհի վրա չկա մի չար մարդ, որը չի պատժվել. բոլորը պատասխան են տալու Տիրոջը»:

Երգիչ, դերասան Արամ MP3-ն «Ինստագրամ» սոցիալական ցանցի միջոցով երկրպագուներին տեղեկացրել է, որ այսօր նախատեսված իր համերգը չեղարկում է:

«Այսօր, ինչպես գիտեք, պետք է տեղի ունենար իմ համերգը, բայց հայտնի պատճառներից ելնելով՝ ես չեղարկում եմ այսօրվա համերգը եւ տեղափոխում եմ անհայտ ժամկետով. մնացածի մասին ձեր լրացուցիչ կասեն: Այս պահին միակ ցանկությունս է, որպեսզի, որքան հնարավոր է, քիչ կորուստներ լինեն: Դեռ կան մարդիկ, որոնք փլատակների տակ են գտնվում: Աղոթենք բոլորս, որպեսզի բոլորը ողջ մնան: Շնորհակալություն ըմբռնման համար», - նշել է Արամը:

Դերասանուհի Անահիտ Կիրակոսյանը գրել է. «Անարդար է ամեն բան, սարսափելի. ցավը բոլորինս է»:

Ողբերգական դեպքին անդրադարձել է նաեւ երգչուհի Սոնա Ռուբենյանը. «Ունենք 16 զոհ, որոնց թվում մեկ մանկահասակ երեխա եւ հղի կին... Խորին ցավակցություններս հարազատներին: Բառ չեմ գտնում ասելու էս կրկնվող մղձավանջի մեջ: Դաժան, շատ դաժան իրականություն»:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՆՈՐ ԵՐԳ

ԴԱԴԱՐՆԵՐՆ ՕՐԻՆԱՉԱՓ ԵՆ

Տեւական դադարից հետո երգչուհի Սյուզի Մելիքյանը նոր երգ է ներկայացրել: «Ты моё» երգը ռուսալեզու է: ArmLur.am-ի հետ զրույցում երգչուհին իր պասիվության վերաբերյալ ասաց, որ դադարներն օրինաչափ են: Ըստ նրա՝ ցանկացած լռության դեպքում ինքը լցվում է նոր գաղափարներով, որոնց իրականացման վրա էլ աշխատում է:

Սյուզիի խոսքով՝ այն, որ երգը ռուսալեզու է, հատուկ գործոնով չէ պայմանավորված, պարզապես այդպես է ստացվել: Երգչուհին նշում է, որ ռուսալեզու եւս մեկ երգ է պատրաստում:

Ի դեպ, «Ты моё» երգի հեղինակները հայեր են, որոնք Հայաստանում չեն բնակվում, իսկ մյուս ռուսալեզու երգի շրջանակներում Սյուզի Մելիքյանը համագործակցել է ռուս հեղինակների հետ:

«Աշխատում եմ շատ հեղինակավոր դեմքերի հետ, որոնք էլ իրենց հերթին ռուսական շոու բիզնեսի մի շարք հայտնի արտիստների համար են երգեր գրում: Շատ հետաքրքիր աշխատանք ենք պատրաստում, մնացածի մասին ավելի ուշ կխոսեմ: Կարծում եմ՝ անակնկալ կլինի»:

Սյուզիի խոսքով՝ թեպետ պասիվ էր վերջին շրջանում, սակայն ինքը հիմա փորձում է կրկին ակտիվանալ երգարվեստում:

«Շատ նոր մտքեր ունեմ, որոնց իրականացման վրա շատ եմ աշխատում:

Կարծում եմ, որ շուտով շատ հետաքրքիր նորություններով եմ հանդես գալու»:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՀԱՂԹԱՆԱԿ ՏՈՆԵՑ

Հայաստանի շախմատի հավաքականի նախկին անդամ Լեւոն Արոնյանը շարունակում է ելույթները FTX Crypto Cup արագ շախմատի մրցաշարում:

Արագ շախմատի մրցաշարի երկրորդ տուրում Արոնյանի մրցակիցը Լեհաստանից Յան-Կշիշտոֆ Դուդան էր: Մեկնարկային չորս պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի արդյունքով, եւ որոշիչ եղավ թայ-բրեյքը, որտեղ հաղթանակ տոնեց Լեւոն Արոնյանը: Այժմ Արոնյանը մրցաշարային աղյուսակում երրորդն է: Հաջորդիվ հայ գրոսմայստերի մրցակիցը աշխարհի չեմպիոն Մագնուս Կարլսենն է:

Արագ շախմատի այս մրցաշարը բաղկացած է 7 տուրից, իսկ մրցանակային ֆոնդը կազմում է 210 հազար ԱՄՆ դոլար:

ՄԽԻԹԱՐՅԱՆԸ ՎՆԱՍՎԱԾՔ ՈՒՆԻ

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի նախկին ավագ, Միլանի «Ինտեր»-ի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանը վնասվածքի պատճառով բաց կթողնի խաղեր մի քանի շաբաթ:

Հայ կիսապաշտպանի մոտ առկա է ձախ ազդրային մկանի լարվածություն: Ըստ ամենայնի, Մխիթարյանը խաղադաշտ կվերադառնա 2 շաբաթից ոչ շուտ: «Ինտեր»-ի բուժանձնակազմն աշխատում է այն ուղղությամբ, որ Մխիթարյանը կարողանա մասնակցել սեպտեմբերի սկզբին նախատեսված «Միլան»-ի դեմ խաղին:

ՀՐԱԺԱՐՎԵԼ Է ՎԱՃԱՌԵԼ

Մադրիդի «Աթլետիկոն» հրաժարվել է վաճառել իսպանացի հարձակվող Ալվարո Մորատային: Մի քանի անգլիական ակումբներ առաջարկել են 40-45 միլիոն եվրո: 29-ամյա ֆուտբոլիստը վերադարձել է Թուրինի «Յուվենտուսից» եւ դեմ չէ այս մրցաշրջանն անցկացնել արգենտինացի Դիեգո Սիմեոնեի գլխավորած թիմում:

Ալվարո Մորատայի պայմանագիրն «Աթլետիկոյի» հետ նախատեսված է մինչեւ այս մրցաշրջանի ավարտը: Իսպանիայի առաջնության մեկնարկային տուրի խաղում Ալվարո Մորատան դարձել էր դուբլի հեղինակ, «Աթլետիկոն» 3:0 հաշվով հաղթել էր «Խետաֆեին»:

ԽԱՂԵՐԻ ՀԱՂԹՈՂՆԵՐ

Հայաստանի մարզիկ-զինծառայողները Համաշխարհային կադետական խաղերին գերազանց ելույթներ են ունեցել՝ նվաճելով 4 ոսկե, 1 արծաթե, 1 բրոնզե մեդալ: Բանակայինների համաշխարհային խաղերի հաղթողներ են դարձել Գոռ Բեգլարյանը (աթլետիկա, հեռացատկ), Ռազմիկ Մկրտչյանը (աթլետիկա, 200 մ վազք), Երվանդ Մկրտչյանը (աթլետիկա, 1500 մ վազք), Արթուր Բարսեղյանը (լող, բաթերֆլայ ոճ): Երվանդ Մկրտչյանը (աթլետիկա, 1500 մ վազք): Հայ բռնցքամարտիկը նոկաուտով հաղթեց թուրք մարզիկին ու մեդալ ապահովեց:

● *Օգոստոսի 23-ին Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Ծննդյան վկայական» թատերական ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-5000 դրամ: Սկիզբը՝ ժանը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ կարգով է իրականացվում ծննդի ոլեսական գրանցումը, ի՞նչ փաստաթղթեր են ներկայացվում ծննդի ոլեական գրանցման համար, ի՞նչ ժամկետում է կատարվում ծննդի ոլեական գրանցումը, որտա՞ն է կազմում ոլեական տուրքի դրույքաչափը:

Լուսինե Վարդանյան (21 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Երեխայի ծննդի ակտի գրառման մեջ ամուսնության մեջ գտնվող հայրը եւ մայրը գրառվում են որպես երեխայի ծնողներ՝ նրանցից որեւէ մեկի դիմումի հիման վրա: Երեխայի ծննդի գրանցման համար ներկայացվում է գրավոր հայտարարություն, ծնողների /ծնողներից մեկի/ եւ դիմողի անձը հաստատող փաստաթուղթ, երեխայի ծննդի ակտի գրառման մեջ հոր մասին տեղեկություններ լրացնելու համար հիմք համարվող փաստաթղթեր (օրինակ՝ ամուսնության վկայական, ամուսնալուծության վկայական, հոր մահվան վկայական), երեխայի ծնունդը հաստատող փաստաթուղթ, մասնավորապես՝ ծննդյան մասին սահմանված ձեւի փաստաթուղթ՝ տրված բժշկական այն կազմակերպության կողմից, որտեղ տեղի է ունեցել ծնունդը: Ծննդի պետական գրանցման՝ ներառյալ վկայական տալու համար պետական տուրք չի գանձվում:

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Խնամատար ծնող դառնալու ցանկություն հայտնած անձից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ստանալուց հետո եւ, սոցիալական աջակցության տարածքային գործակալության (բաժնի) կողմից տրված խնամատար ծնող հաշվառելու վերաբերյալ եզրակացության հիման վրա, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով եւ ժամկետում տրվում է խնամատար ծնող դառնալու հնարավորության մասին դրական կամ բացասական եզրակացություն:

Էջը՝ ՆԱԻՐԻԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ո՞վ է համարվում գործազուրկ:

Կարինե Պողոսյան (38 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Գործազուրկ է համարվում տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը չլրացած, աշխատանք փնտրող եւ զբաղվածություն համարվող գործունեության որեւէ տեսակով չզբաղված անձը, որն աշխատանք գտնելու նպատակով հաշվառված է Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնում, պատրաստակամ է անցնելու հարմար աշխատանքի եւ ստացել է գործազուրկի կարգավիճակ: Տարածքային կենտրոնն աշխատանք փնտրող անձին տալիս է գործազուրկի կարգավիճակ որպես աշխատանք փնտրող հաշվառվելու համար անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Զբաղվածություն համարվող գործունեության տեսակներն են՝

- գործատուների մոտ վարձու աշխատանքային գործունեությունը (այդ թվում՝ ՀՀ օրենքներով նախատեսված ծառայությունների կադրերի ռեզերվում գտնվելը՝ բացառությամբ վարձատրություն չնախատեսող դեպքերի),
- քաղաքացիաիրավական պայմանագրով ծառայությունների մատուցումը կամ աշխատանքների կատարումը,
- անհատ ձեռնարկատիրական եւ նոտարի գործունեությունը,
- արտոնագրային վճար վճարողի գործունեությունը,
- ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունը,
- ուսումնական հաստատություններում, մասնագիտական ուսուցման դասընթացներում եւ ուսուցման այլ ձեւերում առկա ուսուցումը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Քաղաքացիները ծաղիկներ, խաղալիքներ եւ մոմեր են բերում «Սուրմալու» առեւտրի կենտրոնում տեղի ունեցած ողբերգական պայթյունի վայր՝ ի հիշատակ զոհված քաղաքացիների:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **17.08.2022**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: